

17798

# Ա. Ի. ՄիկոՅան

ՃԱՌ ՅԵՐԵՎԱՆԻ ՍՏԱԼԻՆՑԱՆ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳԻ  
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

Թ դեկտեմբերի 1937 թ.

324(47)  
մ-70

ԳՈԼՈՔԱԿԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՄԱՎԱՐԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԱԴԱՅ ● 1939

ԳՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒՄ

15 JAN 2010  
26 SEP 2006

# Ա. Ի. ՄԻԿՈՅԱՆ

324 (47)

LP-70

ՀԱՌ ՅԵՐԵՎԱՆԻ ՍՏԱԼԻՆՑԱՆ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳԻ  
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

9 դեկտեմբերի 1937 թ.



Հնկե՛ր ընտրողներ—բանվորներ, բանվորուհիներ,  
ծառայողներ, մանկավարժներ, քժիչներ, գիտնական-  
ներ—բոլոր, վոր այստեղ հանդիս յեկաք, վոր իմ  
հասցեյին ձեր բարեկամական զգացմունքներն արտա-  
հայտեցիք, վոր Ազգությունների Խորհրդի դեպուտա-  
տության համար իմ թեկնածությունն առաջարեցիք,  
վոր հոգուտ իմ պիտի քվեարկեք, թույլ ավելք այդ  
առթիվ ձեզ բոլորիդ անինդորեն չնորհակալություն  
հայտնել: Յես չեյի կարող հանդիսա կերպով լսել ձեր  
գովասանքները, վոր դուք այսուհետ ջերմորեն արտա-  
հայտեցիք իմ հասցեյին, յեթե չիմանայի, վոր այդ  
գովասանքներն առաջին հերթին վերաբերում են Լենի-  
նի—Ստալինի մեջ մեծ կուսակցությանը:

Ամբողջ Հայաստանում—լեռներում, ձորերում ու  
հարթավայրերում—և միութենական մյուս հանրապե-  
տություններում, ինչպես նաև մեր ամբողջ անծայրա-  
ծիր յերկրում, նախընտրական ժողովներն ընթանում են  
վիթխարի վերելքով, հեղափոխական հոկայական կըր-  
քուությամբ: Եերկրագնդի և վոչ մի յերկիր յերբեք  
վոչ մի նման բան չի տեսել: Միայն մեղանում, Հաղ-  
թանակած սոցիալիզմի յերկրում, հնարավոր և դեմո-  
կրատիայի այդպիսի իսկապես համաժողովրդական  
հաղթանակ, բոլոր ժողովուրդների աշխատավորների  
այդպիսի անխորտակելի միասնություն բազեիցան  
կուսակցության շուրջը: (Թունի ծափահարություններ:

5030  
39

Ա. И. МИКОЯН

Речь на собрании избирателей Ереванского—  
Сталинского избирательного округа  
9 декабря 1939 г.

Государственное издательство полит. литературы  
Ереван 1939

Բացականչություններ տեղերից. «ԿԵՐԵՐԵՇ ԺՈՂՈՎԱՆԻԴ-ՆԵՐԻ ՍՊԱՀԻՆՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ») :

ԽՍՀՄ բոլոր ժողովականների միջև խորհրդային իշխանության տարիների ընթացքում ստեղծված և այնպիսի բարեկամություն, այնպիսի համախմբվածություն, վորպիսին չի կարելի յերևակայել բուրգուական և վոչ մի յերկրում։ Ահա թե ինչու մեզանում նախընտրական կամպանիան փոխարկվեց անխտիր բոլոր աշխատալորների կամքի միանության, ձղոտմների միանության հզոր ցույցի՝ ԽՍՀՄ Գերադույն Խորհրդի համար ընտրելու կուսակցական ու անկուսակցական քաղաքացիների կողմից միատեղ առաջադրած թիկնածուներին։ Ամենուրեք միատեսակ ուժով յերևան և գալիս միւնույն ձգտումը՝ իրենց ճայները տալու նրան, ով նվիրված է հայրենիքին, ժողովրդին, ով զնում է Լենինի—Ստալինի կուսակցության հետեւյց։ (Յերկարագու ծափահարություններ)։

Ժողովրդական մասսաների քաղաքական այս անհախընթաց խանդավառությունը, այս իրոք վոր չտեսնաված ակտիվությունն ամենքի՝ անկախ ազգությունից, հասակից ու սեռից, նույնիսկ, նրանց, ովքեր առաջներում վոչ մի անդամ իրենց կյանքում ժողովում վոչ մի ճառ չեն արտասանել, իսկ այժմ անդաղքում տրիբունայից հնչում ե խորհրդային իշխանությանը նվիրված լինելու նրանց ձայնը, — այս ամենը տեղի յէ ունենում միայն այն պատճառով, վեր մենք իշխանության դերագույն մարմինն ընտրում ենք Ստալինյան Սահմանադրության հիման վրա :

Աշխարհում ամենալեմոկրատական այդ Սահմանադրությունը խոսում է այն մասին, վոր յերբեմնի հետամենաց, ամենքից մուացված Ռուսաստանը զարդար

առաջալիոր, անպարտելի, վոր յերբեմնի ազգարա-  
յին յերկիրը դարձավ սոցիալիզմի ինդուստրիալ հզոր  
տերություն։ Մի ժամանակ նա արորի յերկիր եր,  
այժմ դարձել ե տրակտորի յերկիր։ Աղքատ յերկրից  
փոխարկվել ե հարուստ ու լիառատ յերկրի։ մութ,  
անդրագետ յերկիրը դարձել ե ընդհանուր կրթության  
յերկիր, մեքենայական առաջավոր տեխնիկայով զին-  
ված յերկիր։ Այժմ մեր յերկրում տիրապետում ե  
աղատ ժողովուրդը, վորը զոդված ե ստալինյան բա-  
րեկամության անխղելի կապերով։

Ստալինյան Սահմանադրությունը հանդիսացավ  
վորպես ժողովրդական մասսաների վոգելորության և  
ընդհանուր ձգտման նոր աղբյուր՝ անցկացնելու լնտ-  
րությունները կոմունիստների ու անկուռակցականների  
միասնական բլոկով, նոր զարկ տալու մեր սոցիալիս-  
տական մեծ հայրենիքի հզորության ամրապնդմանը:

Ո՞ւմ ենք մենք պարտական այս բանի համար, վոր  
բազմամիլիոն յերկիրը միավորվեց և զարձավ մի ամ-  
րողական, անհաղթելի պետություն։ Մենք պարտա-  
կան ենք Լենինին, մարդկության մեծագույն հանճա-  
րին, վորը վոչ միայն կարողացավ ամենայն հետևո-  
ղականությամբ Ռուսաստանում կիրառել Մարքսի-  
ենգելսի հեղափոխական թեորիան, այլև զարգացրեց,  
լրացրեց այդ թեորիան պրոլետարական հեղափոխու-  
թյան և պրոլետարիատի դիկտուտուրայի վերաբերյալ  
ուսմունքով։ Մենք պարտական ենք Լենինին, վորը  
բոլցելիների կուսակցությանը գաստիարակեց ցարիզ-  
մի դեմ մղած պայքարում, գլխավորեց Հոկտեմբերյան  
հեղաշրջումը, ապահովեց հաղթանակը քաղաքացիա-  
կան պատերազմում և անցումը դեպի քայլայտած  
տնտեսության վերականգնումը։

Մենք պարտական ենք մեծ Ստալինին, վորն այնպես հետեղականորեն շարունակում է լենինի դործը։ (Բուռն ծափահարություններ։ Բացականչությաններ տեղերից։ «Կեցցե՛ մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինը»)։

Ընկեր Ստալինը լենինի դադաղի առջև սրբազան յերդում ե տվել՝ բարձր պահել լենինիզմի մեծ դրոշը—մինչև վերջը հավատարիմ լինել լենինյան պատգամներին և անդադրում շարունակել լենինի սկսած դործը։ Ընկեր Ստալինը սրբությամբ կատարում ե իր տված յերդումը։ Ընկեր Ստալինը վոչ միայն շարունակում է լենինի դործը։ Անչափ հսկայական ե ընկեր Ստալինի յերախտիքն այն բանում, վոր նա լենինի ուսմունքը զարդացրեց ու լրացրեց սոցիալիստական հասարակության կառուցման ժամանակաշրջանում։

Մեր Սահմանադրությունը, վոր մշակել ե ընկեր Ստալինը, իր մեջ մարմնավորում ե պրոլետարական հեղափոխության բոլոր նվաճումները և հանդիսանում ե վոչ այլ ինչ, բայց յեթե սոցիալիստական հասարակության մասին ստալինյան ուսմունքի շարադրանքը, վոր ուղեցույց ասող կինի ամբողջ աշխարհի ժողովուրդների համար։ (Բուռն ծափահարություններ)։

Կատարելով Հոկտեմբերյան հեղափոխությունը, մենք հնարավորություն ունեյինք հաշվի առնելու մյուս հեղափոխությունների պատմական դասերը։ Սակայն զյուղանատեսությունը սոցիալիզմի ուղևերի վրա փոխադրելու դործում մենք ուրիշեց սովորելու բան չունեյինք։ Միայն ընկեր Ստալինը կարողացավ ամբողջ հաշկել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և հարյուրմիլիոնա-

նոց գյուղացիությանը կոլտնտեսային կարգի մեջ ներգրավելու թերիխան։ Ամենակարճ ժամկետում ձեռքբերել այլպիսի համաշխարհային-պատմական հաղթանակ, վորի մասին յերազել անդամ չեյին կարող մարդկության լավագույն հանճարները, հասնել այն բանին, վոր դարերով մեկուսացած ապրող հարյուր միլիոն գյուղացիները սկսեցին ապրել ու աշխատել տոշիալիստականորեն, հարավոր յեղալ միմիայն չնորհիվ լենինի համատարիմ աշակերտ—հանճարեղ Ստալինի։ (Յերկարածն բուռն ծափահարություններ, վորոնց վեր են ածվում ովացիայի։ «Ուսա» բացականչություններ ընկեր Ստալինի պատվին)։

Ընկեր Ստալինը, պեսնելով մեր չուրջը կապիսալիստական շրջապատում, միշտ սրում եր մեր կուսակցության վկոնությունը և մեզ սովորեցնում եր, թե ինչպես պետք ե ծանաչել թշնամուն, ինչպես պետք ե նրա հետ անխնա կերպով հաշիվ տեսնել։ Վորաբեողի մեր խորհրդային ժողովուրդը կարողանա հանդիսա, խաղաղ ապրել ու աշխատել, դրա համար պետք ե ունենալ կարմիր Բանակ, վորը զինված լինի ուսմական նորագույն տեխնիկայով, ընդունակ լինի ցանկացած բոպեյին վոչնչացնել թշնամուն հենց նրա ոերիտորիայում, յեթե նա համարձակվի իր խոզի դռնչը կոմիս մեր խորհրդային բանջարանոցը։ Այլպիսի բանակ մենք այժմ ունենք։ 16 տարի մենք խաղաղ ենք ապրում միայն այն պատճառով, վոր ընկեր Ստալինի ողնությամբ ստեղծված ե լավ կազմակերպված ու գինված կարմիր Բանակ, այն պատճառով, վոր մեր կողմից անշեղորեն անց ե կացվում խաղաղության քաղաքականություն։ (Մտփահարություններ և վազայինի

բացականչություններ ի պատիվ ընկերմեր Ստալինի՝ ու  
Վորոշիլովի):

Մեր բոլոր հոյակապ հաջողություններով մենք  
պարտական ենք այն բանին, վոր մեր առաջնորդ ըն-  
կեր Ստալինը ծիչտ և առաջնորդում Խորհրդային Մի-  
ության ժողովուրդներին լենինյան ազգային քաղաքա-  
կանության ուղիղով, վորի հիման վրա նա ծվեն-ծվեն  
արված, իրար դեմ շարունակ թշնամաբար տրամա-  
դրված ժողովուրդներ ունեցող յերկրից ստեղծեց մի-  
անական հզոր սոցիալիստական պետություն—ԽՍՀՄ:  
(Ծափահարություններ):

Ռուսական ցարը ազգային հարցը լուծում եր մըտ-  
րակով, բանտով, կախաղանով: Դաշնակները՝ հայ  
ժողովրդի այդ ամենավոլուերիմ թշնամիները, ազգային  
պրոբլեմը լուծում ենին արյունով ու մահով: Երանք  
իրենց իշխանության յերկու տարվա ընթացքում յեր-  
կու պատերազմ կազմակերպեցին: Դաշնակների ժա-  
մանակ ազգային քաղաքականությունը—զա մի ժողո-  
վուրդ մյուսի դեմ զաղանաբար զրգուեն եր: Ահա  
թե ինչու Հայաստանը դաշնակների ժամանակ վորե-  
րի յերկիր եր, արցունքի յերկիր, աղքատության ու  
Հայրենի կամացականության յերկիր:

Միմիայն խորհրդային իշխանությունը բացեց նոր,  
իսկական մարդկային կյանք ծայրերկրյա բոլոր ժողո-  
վուրդների համար: Նա տապալեց ճնշողներին: Մե-  
կանում այլևս չկա ազգամիջյան պառակտում: Խոր-  
հրդային իշխանությունը չտեսնված ուժով առաջ  
մզեց բոլոր ժողովուրդների կուլտուրան—ձեռվ ազգա-  
յին, բովանդակությամբ սոցիալիստական: Ռուսական  
պրակտարիստի դեկավարությամբ խորհրդային իշ-  
խանությունը Խորհրդային Միության բոլոր ժողո-

վուրդներին հաղորդակից դարձրեց նոր սոցիալիստա-  
կան կյանքին:

Խորհրդային Հայաստանը մյուս բոլոր ժողովուրդ-  
ներից ավելի յէ պարտական խորհրդային իշխանու-  
թյանը: Այդ իշխանությունը հայ ժողովրդին տվեց  
վո'չ միայն ազատություն, այլև խաղաղ ուսություն,  
վորից այդ ժողովուրդին առաջներում զրկված եր:  
Հայկական ԽՍՀ զարգանում ե արագ կերպով, նա կա-  
րող եր ե'լ ավելի արագորեն զարգանալ, յեթե նրա  
զարդացումը չարգելակեյին հայ ժողովրդի թշնամի-  
ները—դաշնակները, տրոցիկստական՝ բուխարինյան  
վինասարարները, վորոնց բունը հիմնականում արդեն  
ջախջախաված ե: (Բաւան ծափահարություններ: «Ուտա»  
բացականչություններ ի պատիվ ընկեր Միկոյանի):

Ընկերների: Դեկտեմբերի 12-ին, ԽՍՀՄ Գերազույն  
Խորհրդի ընտրությունների պատմական օրը, հայ ժո-  
ղովուրդը կցուցադրի իր անուահման նվիրվածությու-  
նը Լենինի—Ստալինի մեծ կուսակցությանը: Մենք բո-  
լոր հիմքերն ունենք հուսալու, վոր Խորհրդային Հա-  
յաստանի ընտրողները, բոլորը, վորպես մի մարդ,  
իրենց ծայնը կտան լենինյան կուսակցության անդամ-  
ներին և անկուսակցական թեկնածուներին, վորոնք  
համերաշխորեն առաջադրված են կոմունիստների և  
անկուսակցականների բլոկի անունից:

Դեկտեմբերի 12-ին Հայաստանի յուրաքանչյուր  
ընտրող պետք ե գա ընտրական տուփերի մոտ, վոր-  
պեսպի կատարի իր քաղաքացիական մեծ պարտքը—  
ընտրի խորհրդային իշխանության գերագույն որդանը:

Կեցե՞ կոմունիստների ու անկուսակցականների  
դաշնութ առաջիկա ընտրություններում:


Կեցցե՛ մեր առաջնորդ, ուսուցիչ և բարեկամ մեծ  
Ստալինը: (Բոլորը վոտիքի յեն կանգնում: Դակիճը  
բուռն ովաշխա յե սարեւում: Տեղերից ենչում են բա-  
ցականչություններ. «Կեցցե՛ դեպուտատության մեր  
թեկնածու ընկեր Միկոյանը և ժողովուրդների սիրելի  
առաջնորդ ընկեր Ստալինը»):



Տպագրված և Լ. Խազարյանի հսկողությամբ  
Տեխ. խմբ. Ա. Խոչտրյան  
Պըբագրիչ Հ. Գոլուխանյան  
Կանոքու սըբագրիչ Լ. Արավյան

Դւմգլիտի լիազոր №Կ. 6501, հրատ. Ա 747  
Պատվեր Ա 228, տիրաժ 7000  
Հանձնվել և արտադրության 2/XI 1939 թ.  
Ստորագրվել և տպագրելու 5/XI 1939 թ.  
Դինը 15 կ.

Տպագրական գրականության պետական հրատարակչության  
տպարան, Եկրեան, Ալլահվերդյան Ա 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0196115

ԳԻՒՐ 15 Կ.

Ա. И. МИКОЯН

Речь на собрании избирателей  
Ереванского Сталинского  
избирательного округа

9 декабря 1939 г.

Государственное издательство полит. литературы  
Ереван 1939